CENTRAL BANK
OF THE REPUBLIC OF ARMENIA
CHAIRMAN

ЦЕНТРАЛЬНЫЙ БАНК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ПРЕДСЕДАТЕЛЬ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
ՆԱԽԱԳԱՀ

6, Vazgen Sargsyan str., 0010, Yerevan
Tel.: (37410) 583 841
Fax: (37410) 565 496

0010, Երևան, Վազգեն Սարգսյան, 6
Հեռ.՝ (37410) 583 841
Ֆաքս՝ (37410) 565 496

0010, Ереван, Вазгена Саркисяна, 6
Тел.: (37410) 583 841
Факс: (37410) 565 496

30.04.2013թ. թիվ 08.3-04/000339-13

Հայաստանի Հանրապետության Վարչապետ
պարոն Տիգրան Սարգսյանին

Մեծարգո պարոն Վարչապետ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 31-րդ հոդվածներով՝ Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի ապրիլի 29-ի թիվ 107Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը»:

Առդիր՝ 5 էջ:

Հարգանքով՝ ?????? ???????? Արթուր Ջավադյան

Apr 30 2013 10:52 AM

ՀՀ կենտրոնական բանկի եզրակացությունը
«ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

ՀՀ տնտեսության վերականգման աճի տեմպերի արագացման վերջին տարիներին արձանագրված միտումները դրսևորվեցին նաև 2012 թվականին՝ տարվա արդյունքում ապահովելով տնտեսական աճի 7.2 տոկոս մակարդակ: Տնտեսական աճի ձևավորմանը հիմնականում նպաստել են ծառայությունների, գյուղատնտեսության և արդյունաբերության ճյուղերում արձանագրված իրական աճերը: Ընդ որում, ծառայությունների ոլորտի աճը կազմել է 8,0 տոկոս, գյուղատնտեսությանը՝ 9.3 տոկոս և արդյունաբերության ճյուղի աճը՝ 5.7 տոկոս: Տնտեսական աճի բարձր մակարդակի ձևավորմանը մեծ նպաստում է ունեցել վարկերի ծավալների աճը, որը վերջին տարիների ընթացքում կազմել է տարեկան միջին շուրջ 30 տոկոս: Ընդ որում, ՀՀ տնտեսությունում վարկերի միջոցով իրականացված ներդրումներն ուղղվել են առավել արտադրողական՝ արդյունաբերության, գյուղատնտեսության ճյուղերին, տրանսպորտի և կապի ոլորտներ: Արդյունքում, համախառն առաջարկը խթանող վերը նշված տնտեսության ճյուղերում, վարկերի տեսակարար կշիռը վարկերի ընդհանուր ծավալում 2009-2012թթ. ընթացքում շուրջ 12 տոկոսային կետով աճել է և կազմել 33.3%՝ հանգեցնելով ՀՆԱ-ի ներուժի ավելացմանը:

ՀՀ մակրոտնտեսական միջավայրի 2012 թվականի հիմնական զարգացումները, ընդհանուր առմամբ, պայմանավորված էին համաշխարհային տնտեսության դանդաղ վերականգնման և ՀՀ մակրոտնտեսական կայունության ապահովմանն ուղղված հարկաբյուջետային ու դրամավարկային կոորդինացված քաղաքականությունների ազդեցությունների դրսևորմամբ:

Հարկաբյուջետային քաղաքականությունը 2012 թվականին ընդհանուր առմամբ եղել է հավասարակշռված և մակրոտնտեսական կայունության ապահովման նպատակադրման ներքո ուղղված էր մի կողմից տնտեսական ակտիվության վերականգնմանը չհակազդելուն, իսկ մյուս կողմից՝ պարտքի արդյունավետ կառավարմանը: Նման հարկաբյուջետային քաղաքականությունն ուղեկցվել է ՀՀ պետական բյուջեի պակասուրդի էական կրճատմամբ, ինչը համախառն պահանջարկի վրա ունեցել է զսպող ազդեցություն և զգալիորեն նպաստել է մակրոտնտեսական կայունության բարելավմանը:

Հարկաբյուջետային քաղաքականության նախանշված զարգացումներին զուգահեռ, ՀՀ կենտրոնական բանկը, հաշվի առնելով ողջ տարվա ընթացքում թույլ և հավասարակշռված գնաճային միջավայրի պահպանումը, իրականացրել է չեզոք դրամավարկային քաղաքականություն՝ անփոփոխ թողնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Տարվա ընթացքում գնաճային միջավայրը ձևավորվել է գյուղատնտեսությունում թողարկման ծավալների բարձր աճով պայմանավորված առաջարկի շոկի գերակայող ազդեցությամբ: Ընդ որում, 12-ամսյա գնաճի մակարդակը տարվա առաջին կիսամյակի նվազումից հետո երկրորդ կեսին բարձրացել է և ողջ տարվա ընթացքում պահպանվել է տատանումների թույլատրելի միջակայքում: 2012 թվականին միջին գնաճը կազմել է 2.6 տոկոս:

Տարվա ընթացքում ՀՀ տնտեսական աճի նախանշված բարձր մակարդակի ձևավորումը անդրադարձել է նաև պետական բյուջեի եկամուտների վրա՝ նպաստելով ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտներ/ ՀՆԱ համամասնության ծրագրված մակարդակի գերազանցմանը: Պետական բյուջեի եկամուտների անվանական աճը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 7.4%, իսկ հարկային եկամուտներինը՝ (ներառյալ պետական տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները) 13%: Ընդ որում, տարվա

արդյունքներով պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 23.8%-ը՝ նախորդ տարվա 23.3%-ի դիմաց, իսկ հարկային եկամուտները (ներառյալ պետական տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները) կազմել են ՀՆԱ-ի 22.1%-ը՝ նախորդ տարվա 20.6%-ի դիմաց: Տարվա արդյունքում արձանագրված հարկեր/ՀՆԱ ցուցանիշի 1.5 տոկոսային կետ աճը գերազանցել է տարվա համար կանխատեսված ցուցանիշը[1]:

2012 թվականին ՀՀ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 2%-ով, որը արձանագրվել է ընթացիկ ծախսերի աճի հաշվին, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով արձանագրվել է ծախսերի նվազում: Այսպես, ընթացիկ ծախսերի գծով գրանցվել է անվանական աճ 7.8%-ի չափով, որի պարագայում ընթացիկ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 22%՝ նախորդ տարվա 21.5%-ի դիմաց: Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը 2012 թվականին կազմել են ՀՆԱ-ի 3.3%-ը՝ նախորդ տարվա 4.7%-ի փոխարեն: Վերջինս պայմանավորված է որոշ ծրագրերով նախատեսված միջոցների տնտեսմամբ, ինչպես նաև առանձին ծրագրերի շրջանակներում գնումների հետ կապված վճարումների հետաձգմամբ:

Բյուջեի եկամուտների ծրագրված ցուցանիշի ապահովման և ծախսերի գծով վերը նշված տնտեսումների պայմաններում ՀՀ բյուջեի պակասուրդը կազմել է շուրջ 60.0 մլրդ դրամ, որի պարագայում նվազել է պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը կազմելով 1.5%՝ կանխատեսված 3.1%-ի և 2011 թվականի փաստացի 2.8%-ի դիմաց[2]: Տարվա ընթացքում պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրները կազմել են շուրջ 5.9 մլրդ դրամ, իսկ արտաքին աղբյուրներից զուտ ֆինանսավորումը՝ 54.1 մլրդ դրամ:

Պետական արժեթղթերի տեղաբաշխումից ստացվող եկամտի հաշվին բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոքր ինչ գերազանցել է տարվա համար

---

[1] ՀՀ 2012 թվականի բյուջետային ուղերձում բյուջեի եկամուտներ/ՀՆԱ կանխատեսված ցուցանիշը 21.6 է, իսկ հարկային եկամուտներ/ՀՆԱ կանխատեսված ցուցանիշը 20.7%:

[2] ՀՀ 2012 թվականի բյուջետային ուղերձում կանխատեսված ցուցանիշ:

նախատեսված մակարդակը և կազմել է 32.3 մլրդ դրամ՝ միևնույն ժամանակ ուղեկցվելով պետական պարտատոմսերի միջին ժամկետայնության աճով (բոլոր պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 1722 օր (2011թ.՝ 1696 օր), միջին կշռված եկամտաբերությունը՝ 12.9% (2011թ.՝ 12.3%): Տարվա ընթացքում պետական արժեթղթերի տեղաբաշխման ծրագրի ապահովմանը նպաստել է նաև հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման ոլորտում գործողությունների արդյունավետ իրականացումը:

Այսպիսով, 2012 թվականին ՀՀ կառավարության կողմից իրականացրած հավասարակշռված հարկաբյուջետային քաղաքականությունը, ուղղորդվելով ՀՀ կառավարության միջին ժամկետ ռազմավարության ծրագրով նախատեսված պարտքի արդյունավետ կառավարման քաղաքականության շարունակականության պահպանմամբ, իրական նախադրյալներ կստեղծի մակրոտնտեսական կայունության պահպանման համար և կնպաստի միջին ժամկետում գնաճի նպատակային թիրախի ապահովմանը: